Արձանագրություն N 3

«ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/83» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
(«Տեղական արտադրության դեղերի ներկայացման հեռուստահաղորդաշարի պատրաստման և հեռարձակման ապահովման»)

Ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 24 սեպտեմբերի 2024թ. Ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝

Գնման գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարգարյան

Գնման գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Ա. Եգանյան

Գնման գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Լ. Շաբոյան

ԷԱՃ ընթացակարգի քարտուղար՝ Ա. Ղարիբջանյան

1. ԷԱՃ ընթացակարգի հայտերի գնահատման մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. N526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 41-րդ կետով՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր նիստը՝ առաջարկելով մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության նպատակով կասեցման ժամկետի ավարտից հետո 19.09.2024թ. ժամը՝ 17:00-ին հանձնաժողովը շարունակում է իր աշխատանքը:

Արձանագրենք, որ Պատվիրատուի տեխնիկական բնութագրով պահանջ էր սահմանված, որ Մասնակիցը (Թեկնածուն) պետք է համապատասխաներ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված ստանդարտներին և ունենար համապատասխան լիցենզիա:

Հիմք ընդունելով Որոշման 59-րդ կետի 2-րդ ենթակետը և ընթացակարգի հրավերի 2.2 կետով սահմանված պահանջը՝ մասնակցության իրավունքի գնահատման համար Մասնակիցը հայտով պետք է ներկայացներ միայն հրավերով սահմանված հայտարարությունը (Հավելված 1): Հայտարարությունից բացի մասնակցից այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չէր կարող պահանջվել:

Առաջնորդվելով Որոշման 67-րդ կետով՝ գրություն է ուղարկվել ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) մասնակցի կողմից ներկայացրած տվյալների իսկությունը ստուգելու նպատակով:

Հանձնաժողովի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն «Էլիքս» ՍՊԸ-ն լիցենզավորված չէ:

Հավելենք նաև, որ համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ լիցենզիան չի կարող փոխանցվել կամ օտարվել այլ անձի, ինչը վկայում է, որ «Էլիքս» ՍՊԸ-ն որպես մասնակից չունի լիցենզիա և չի կարող իրականացնել տեխնիկական բնութագրով սահմանված գործունեությունն առանց դրա առկայության:

Հիմք ընդունելով Որոշման 42-րդ կետը՝ հանձնաժողովը «Էլիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատում է անբավարար և մերժում է:

Առաջնորդվելով «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և ՀՀ կառավարության մայիսի 18-ի N 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/83» ծածկագրով ընթացակարգը հայտարարվում է չկայացած:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Ա. Մարգարյան

Անդամներ՝

_____ Ա. Եգանյան

_____ Լ.Շաբոյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ա. Ղարիբջանյան